



Consulting&Audit

«ԷՅՎԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«ԷՅՎԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՑԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ԵՐԵՎԱՆ
ԱՊՐԻԼ- 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարության հստատարությունը 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ...	2
Անկախ աուդիտորական եզրակացություն...	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար...	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ...	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար...	7
Դրամական հոսքերի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություն 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար...	8
2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ...	9

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2024Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ
ՏԱՐՎԱԾ ԹԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- ❖ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- ❖ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- ❖ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հստակ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության համախմբված ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին, և
- ❖ Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝


- ❖ Ընկերությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ❖ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ❖ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ❖ Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- ❖ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2025թ. ապրիլի 16-ին:

Ն. Հարությունյան
Գլխավոր տնօրենի ժ/պ

Ն. Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

2025 թ. ապրիլի 16
Երևան, Հայաստանի Հանրապետություն





Consulting&Audit

«ԷՅՎԻ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՌԴԻՏ» ՍՊԸ

«ԷՅՎԻ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՌԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն, 10 փող, տուն 6

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Հեռ: +374 (10) 572879

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱԾՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,

ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2025Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23, ՀԳԳՀ՝ 1 25 0938

ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Հաշվարկային կենտրոն»
փակ բաժնետիրական ընկերության խորհրդին և միակ
բաժնետիրոջ լիազորություններն իրականացնողին*

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիր) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվության վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը տրամադրվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց

խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յուրմե մենք՝

• հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

• ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալիս գնահատելով համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

• գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական աշխատանքի գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

• գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակին ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

16 ապրիլի 2025թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր՝



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	179 662	210 292
Ոչ նյութական ակտիվներ	7	407 618	494 401
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	8	65 998	83 597
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	9	3 268	3 813
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		656 546	792 103
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		6 100	3 557
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	74 855	61 352
Շահութահարկի գծով դեբիտորական պարտքեր		-	3 778
Բանկային ավանդներ	11	52 211	100 793
Դրամական միջոցներ	11	161 205	58 125
Այլ ընթացիկ ակտիվներ	12	16 619	11 888
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		310 990	239 493
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		967 536	1 031 596
ԿԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	13	304 620	304 620
Պահուստային կապիտալ		7 579	7 564
Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)		66 748	34 163
Ընդամենը սեփական կապիտալ		378 947	346 347
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	10 683	6 342
Վարձակալության գծով պարտավորություններ	8	57 210	71 953
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	453 289	540 820
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		521 182	619 115
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	43 190	46 030
Վարձակալության գծով պարտավորություններ	8	12 562	12 562
Շահութահարկի գծով կրեդիտորական պարտքեր		3 775	-
Ընթացիկ պահուստներ	17	7 880	7 542
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		67 407	66 134
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		967 536	1 031 596

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2025թ. ապրիլի 16-ին:
9-28 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրենի ժ/պ


Ն. Հարությունյան





Գլխավոր հաշվապահ

Ն. Գրիգորյան



ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծարունակվող գործունեություն			
Հասույթ	18	616 442	528 513
Վանառքի ինքնարժեք	19	(519 423)	(503 459)
Համախառն շահույթ (վնաս)		97 019	25 054
Վարչական ծախսեր	20	(123 422)	(114 328)
Այլ եկամուտ		230	255
Ծնորհից եկամուտ	15	87 737	89 100
Այլ ծախսեր	21	(8 844)	(7 889)
Ֆինանսական եկամուտներ	22	10 136	6 270
Ֆինանսական ծախսեր	22	(7 438)	(2 994)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (կորուստ)		(1)	(2)
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		55 417	(4 534)
Շահութահարկի գծով ծախս	23	(11 654)	4 832
Ծարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		43 763	298
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		43 763	298

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընդգրկվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-28)

Գլխավոր տնօրենի ժ/պ

Ն. Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

Ն. Գրիգորյան



ՄԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամով

	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	304 620	7 564	33 865	346 049
Շահաբաժինների հայտարարում	-	-	298	298
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	304 620	7 564	34 163	346 347
2024թ հունվարի 1-ի դրությամբ Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	304 620	7 564	34 163	346 347
Պահուստային կապիտալի համալրում	-	15	43 763	43 763
Շահաբաժինների հայտարարում	-	-	(11 163)	(11 163)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	304 620	7 579	66 748	378 947

Մեխանիզմի կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական
հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-28)

Գլխավոր տնօրենի ժ/պ

Ն. Հարությունյան

[Signature]



Գլխավոր հաշվապահ

Ն. Գրիգորյան

[Signature]

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամով

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հանախորդներից ստացված դրամական միջոցներ	726 334	628 659
Այլ մուտքեր	66	
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(372 982)	(343 417)
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(161 916)	(160 176)
Վճարված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(98 995)	(80 251)
Վճարված շահութահարկ	-	(1 000)
Վճարումներ գործուղումների համար	(4 223)	(6 874)
Այլ վճարումներ	-	(270)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գույտ հոսքեր	88 284	36 671
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բանկային ավանդների գծով մուտքեր	108 718	74 769
Բանկային ավանդների գծով ելքեր	(50 000)	(170 000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտք	273	150
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	(6 414)	(7 633)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գույտ հոսքեր	52 577	(102 714)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորության մարումից ելքեր	(19 180)	(12 736)
Վարձակալության գծով տոկոսների վճարումից ելքեր	(7 438)	(2 994)
Շահաբաժինների վճարումից ելքեր	(11 163)	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների գույտ հոսքեր	(37 781)	(15 730)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույտ (նվազում)/աճ	103 080	(81 773)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	58 125	139 898
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-	-
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	161 205	58 125

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 9-28)

Գլխավոր տնօրենի ժ/պ

Ն. Հարությունյան



Գլխավոր հաշվապահ

Ն. Գրիգորյան





Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Կենտրոն» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր դրույթներ

ա) Ընկերության նկարագիրը և գործունեությունը

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1663-Ա որոշման հիման վրա և գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2002 թվականի հոկտեմբերի 31-ին:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Մահմանադրությամբ, ՀՀ Զաղաքացիական օրենսգրքին, «Քաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին, «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքին, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներին, գործող այլ իրավական ակտերին և իր կանոնադրությամբ համապատասխան:

Ընկերության

Անվանումը՝

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ

Գրանցման համարը՝

273.120.03313

Գրանցման վկայականը՝

03Ա 056014

Գրանցման ամսաթիվը՝

31.10.2002 թ.

Գտնվելու վայրը՝

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պող. 27

Հարկ վճարողի հաշվառման համարը՝

01544167

Ընկերության ստեղծման հիմնական նպատակը էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի և հզորության հաշվառման և ֆինանսական հաշվարկների իրականացումն է:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակն առ 31.12.2024թ. կազմել է 71 հոգի (31.12.2023թ.՝ 71 հոգի):

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 304,620,000 (երեք հարյուր չորս միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից բաժնետոմսերի կառավարումն իրականացվում է ՀՀ կառավարության լիազորված մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքով վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ գլխավոր տնօրենի իրավասությանը, իրականացնում է Ընկերության խորհուրդը՝ հետևյալ կազմով.

Լիանա Հովհաննիսյան

Խորհրդի նախագահ

Վարդան Ենգիզունյան

Խորհրդի անդամ

Ռոմիկ Ավոյան

Խորհրդի անդամ

Երանուհի Ազոյան

Խորհրդի անդամ

Նորայր Հարությունյան

Խորհրդի անդամ

Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը պատկանում են Ընկերության գլխավոր տնօրենի իրավասությանը, բացառությամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի: Գլխավոր տնօրենի հաստիքում հիմնական նշանակում կատարված չլինելու դեպքում այդ գործառնություն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարողը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1 Հայտարարություն համապատասխանության մասին

Մույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

2.3 Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կյուրացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2025 թվականի ապրիլի 16-ին Ընկերության գլխավոր տնօրենի ժ/պ Նորայր Հարությունյանի և գլխավոր հաշվապահ Նաիրա Գրիգորյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Գնորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում հիմնադիրների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Հասույթ չի համարվում պետական շնորհներից և նվիրատվություններից ստացված եկամուտը:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Ընկերությունը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակ ինչ որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Ընկերության սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման քաղաքականությունը նկարագրված են Ծանոթ. 18-ում:

Այնքանով, որքանով Ընկերության կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Ընկերությունը ճանաչում է «պայմանագրի գծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

3.2 Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը բիզնեսի միավորում չէ և այդ գործարքի սրահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը բիզնեսի միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ

Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում,

բ) բիզնեսի միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավաստորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը, որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած ամևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը և ս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- | | |
|------------------------------|-----------|
| • Մեքենաներ և սարքավորումներ | 5-18 տարի |
| • Տրանսպորտային միջոցներ | 5-16 տարի |
| • Արտադրատնտեսական գույք | 5-10 տարի |
| • Սերվերներ | 4-20 տարի |
| • Այլ համակարգչային տեխնիկա | 4-6 տարի |

Վարձակալված շենքային տարածքի վրա կատարված կապիտալ ծախսումները մաշվում են 20 տարի ժամկետով:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները (որոնք սովորաբար հիմնված են պայմանագրային իրավունքների ժամկետների վրա) ներկայացված են ստորև.

- | | |
|-------------------------|-----------|
| • Լիցենզիաներ | 2-15 տարի |
| • Համակարգչային ծրագրեր | 4-15 տարի |

3.5 Վարձակալություն. Ընկերությունը դրամա

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը, որպես վարձակալ, ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

ա) բոլոր կարճաժամկետ (12 ամիսը չգերազանցող ժամկետով) վարձակալությունների
բ) բոլոր այն վարձակալությունների, որոնց դեպքում վարձակալության առարկա ակտիվը փոքրարժեք է (այսինքն՝ դրա արժեքը նոր վիճակում չի գերազանցում 2,5 միլիոն դրամը):

Վերը «ա» և «բ» ենթակետերում նշված վարձակալությունների գծով վարձակալական վճարները ճանաչվում են ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում, ինչպես որ նախորդող ժամանակաշրջաններում ճանաչվում էին գործառնական վարձակալությունները:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական

արժեքի մեջ ներառվում են՝

- ա) վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը, ինչպես նկարագրված է ստորև,
- բ) վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հաճախ ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- գ) վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները:

Մեկնարկի ամսաթվին վարձակալության գծով պարտավորությունը չափվում է այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ գեղջված վարձակալությանը ենթադրվող տոկոսադրույքի կիրառմամբ, եթե այդ դրույքը հեշտությամբ որոշելի է: Հսկառակ դեպքում՝ կիրառվում է վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները բաղկացած են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարումներից, որոնք մեկնարկի ամսաթվին դեռևս վճարված չեն.

- ա) հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հաճախ վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսում,
- բ) վարձակալության փոփոխում վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից,
- գ) գումարները, որոնք ակնկալվում է վճարել վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,
- դ) գնման ընտրանքի իրագործման գին, եթե վարձակալը խելամոռեն համոզված է, որ կիրագործի այդ ընտրանքը, և

ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու ընտրանքի իրագործումը:

Ճանաչման և չափման նպատակով, մինչև 2019 թվականի հունվարի 1-ը կնքված վարձակալությունները դիտվում են որպես այդ ամսաթվին կնքված և մեկնարկող վարձակալություն՝ մնացորդային ժամկետով:

Սկզբնական ճանաչումից հետո օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով՝

- ա) հաճա՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և
- բ) ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ (մասնավորապես՝ վարձակալության ժամկետի կամ փոփոխում վարձավճարների վերանայման դեպքում):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է սեփական հիմնական միջոցների հաշվառմանը համանման կերպով: Ընդ որում, եթե ակնկալվում է, որ վարձակալության հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին կամ ընթացքում կփոխանցվի Ընկերությանը, ապա օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ավարտը: Հսկառակ դեպքում՝ մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալության գծով պարտավորությունը չափվում է՝

ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տոկոսը,

- բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարված վարձավճարները, և
- գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վերանայումները կամ վարձակալության վերափոխումները:

Ցուրաքանչյուր ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ չներառված վարձակալության փոփոխում վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ պայմանը:

3.6 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով: Իրացման գույք արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հաճախ համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի մշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները, բացի գերնորմատիվային և ժամանակաշրջանի ծախսերից:

Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.7 Արտարժույթային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր

այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածներին վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.9 Ֆինանսական գործիքներ

i. Միջանկյալ ճանաչում և տեղում

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրված կամ ստացված փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՄ 20-ով սահմանված մոտեցումները:

ii. Արժանահատում

Ընկերությունն ապահանջում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը), կամ

այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապահանջման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապահանջվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

iii. Հատուցում և անվճարում

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրված և ստացված փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը սովորաբար չափվում են անվանական գումարով: Ցպահանջ պարտավորությունները չափվում են այն գումարով, որով ենթակա են մարման պահանջը

ներկայացվելու դեպքում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունն այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումներ չունի:

iv. Արժեքի կուսում

Բոլոր ֆինանսական ակտիվների (բացի «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգվածներից) և պայմանագրերի գծով ակտիվների համար Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) պահուստ՝ այդ ակտիվների սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Սկզբնական ճանաչման ժամանակ ԱՊԿ պահուստը չափվում է 12-ամսյա ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: Եթե սկզբնական ճանաչումից հետո որևէ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, ապա այդ ֆինանսական ակտիվի գծով ԱՊԿ պահուստը չափվում է մինչև մարումը մնացած ամբողջ ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: ԱՊԿ-ն պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատականն է: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասությունների (այսինքն՝ գործիքի պայմաններին համաձայն Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերությունը, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված ֆինանսական ակտիվի արդյունքային տոկոսադրույքով: ԱՊԿ պահուստը և դրա հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: ԱՊԿ պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է որպես համապատասխան ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազեցում:

3.10 Ելույթական և ոչ ելույթական ակտիվների արժեքի կուսում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեքի կուսման ստուգման: Մշակվող ակտիվները վերանայվում են արժեքի կուսման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեքի կուսման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը՝ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեքի կուսումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեքի կուսումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեքի կուսումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեքի կուսումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Չեղյման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Չեղյման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով ապագա դրամական հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը

մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, սալա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.12 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- ա) աշխատավարձը,
- բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
- գ) պարգևավճարները,

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, սալա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, սալագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է սալագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումը ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավաստորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ սալագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Սալագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սալաշվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2 *Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկումը*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա են ակտիվների հնարավոր արժեզրկվածության (այսինքն՝ փոխհատուցվող գումարը հաշվեկշռային արժեքից պակաս լինելու) հայտանիշներ: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և ակտիվի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից առավելագույնը: Նման հայտանիշների առկայության դեպքում իրականացվում է փաստացի արժեզրկումից կորստի հաշվարկ: Արժեզրկված ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որում նվազումը տեղի է ունեցել: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, նախկինում ճանաչված արժեզրկումն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա:

4.3 *Իրական արժեքի չափում*

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնհատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող),
- 2-րդ մակարդակ. 2-րդ մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող),
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումը՝ որպես մեկ ամբողջություն, դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չաձման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումներն Ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

4.4 *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի հնարավոր արժեզրկվածության հայտանիշներ: Ընկերությունը կիրառում է դատողություն, մասնավորապես դերիտորական պարտքերի և ընթացիկ ֆինանսական ներդրումների հնարավոր արժեզրկվածության մեծության որոշման նպատակով: Արժեզրկվածության մեծության որոշման ժամանակ Ընկերությունը հաշվի է առնում դերիտորական պարտքերի ապահովվածությունը, որոնք սովորաբար ներառում են պարտապանի՝ ՀՀ առևտրային բանկում բացված հատուկ հաշվին կատարված դրամական միջոցների գրավադրում և բանկային երաշխիքի ստացում: Ընթացիկ ֆինանսական ներդրումների (ավանդների) արժեզրկվածության մեծության որոշման ժամանակ հաշվի է առնվում պայմանագրի կողմի վարկանիշը, որը մասնավորապես ներառում է միջազգային հեղինակավոր կառույցների կողմից առևտրային բանկերի համար կատարված վարկանշավորումը: Նկատի ունենալով վերը նշվածը՝ Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների գծով արժեզրկումը գնահատել է որպես ոչ էական և այդ իսկ պատճառով չի ճանաչվել:

4.5 *Հարկային օրենսդրություն*

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Ընկերության անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից:

Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով պատասխանատու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

4.6 Ծախսերի բաշխում՝ ծառայությունների մատուցման (վաճառքի) ինքնարժեքի և վարչական ծախսերի միջև
Ընկերությունը կիրառում է դատողություն որոշակի տեսակի ծախսերի դասակարգման ժամանակ: Մասնավորապես, հիմնական միջոցների սպասարկման ծախսերը (այն դեպքում, երբ հստակ առանձնացվելի չէ, թե ծախսը վերաբերում է արտադրական կամ վարչական նշանակության հիմնական միջոցի սպասարկմանը), տարածքի վարձակալության ծախսերը, կոմունալ և համանման այլ գրասենյակային ծախսերը բաշխվում են վաճառքի ինքնարժեքի և վարչական ծախսերի միջև՝ ըստ Ընկերությունում այդ գործառնություններից յուրաքանչյուրն իրականացնող աշխատակիցների թվաքանակի հարաբերակցության (տեսակարար կշիռների):

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1 Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Ստորև նկարագրված են այն ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտել 2023 թ. հունվարի 1-ից:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 12 ստանդարտում՝ եզակի գործարքների արդյունքում առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ:
- Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը:
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում՝ Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում:
- Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում՝ Տնկոսադրույքի ուղեկիժի բարեփոխում-Փուլ 2: Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

5.2 Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Հրապարակված, սակայն սույն ֆինանսական հաշվետվություններով ծածկվող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք Ընկերության կանխատեսումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Ընկերությունը մտադիր է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- Փոփոխություններ ՖՀՄՍ 9 ստանդարտում՝ առևտրային դեբիտորական պարտքերի չափումը: Գործում է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար
- Փոփոխություններ ՖՀՄՍ 9 ստանդարտում՝ վարձակալությունների գծով պարտավորությունների սպանաանաչումը: Գործում է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար
- Փոփոխություններ ՖՀՄՍ 19 ստանդարտում՝ Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրեր Գործում է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենա - սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրա տնտեսական գույք	Սերվերներ և այլ համակարգչային տեխնիկա	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ	54 748	48 160	21 548	206 909	1 490	332 855
Ավելացումներ	3 690	-	6 470	89 009	-	99 169
Օտարումներ, դուրս գրումներ	(1 259)	-	(1 368)	(1 887)	(721)	(5 235)
Վերադասակարգումներ	285	-	(570)	285	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	57 464	48 160	26 080	294 316	769	426 789
2024թ հունվարի 1-ի դրությամբ	57 464	48 160	26 080	294 316	769	426 789
Ավելացումներ	-	2 563	1 529	2 613	-	6 705
Օտարումներ, դուրս գրումներ	(99)	-	-	-	(99)	(198)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	57 365	50 723	27 609	296 929	670	433 296
Կուտակված մաշվածություն						
2023թ հունվարի 1-ի դրությամբ	38 604	27 493	14 248	109 354	-	189 699
Տարվա ծախս	2 708	3 762	2 048	22 725	-	31 243
Օտարումներ, դուրս գրումներ	(1 190)	-	(1 368)	(1 887)	-	(4 445)
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	40 122	31 255	14 928	130 192	-	216 497
2024թ հունվարի 1-ի դրությամբ	40 122	31 255	14 928	130 192	-	216 497
Տարվա ծախս	2 910	3 954	2 357	27 943	-	37 164
Օտարումներ, դուրս գրումներ	(27)	-	-	-	-	(27)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	43 005	35 209	17 285	158 135	-	253 634
Հուտ հաշվեկշռային արժեք						
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	17 342	16 905	11 152	164 124	769	210 292
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	14 360	15 514	10 324	138 794	670	179 662

31.12.2024թ. դրությամբ օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների պունակում ներառված գումարներն ամբողջությամբ վերաբերում են օպտիկամանրաթելային կապի սարքավորումներին, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ դեռևս մատչելի չեն օգտագործման համար:

31.12.2024թ. դրությամբ Ընկերությունը չունի հիմնական միջոցների ձեռքբերման գծով որևէ պայմանագրային հանձնառություն:

31.12.2024թ. դրությամբ Ընկերության հիմնական միջոցների սեփականության իրավունքի սահմանափակումներ առկա չեն:

7. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ հունվարի 1-ի դրությամբ	708 407	62 203	770 610
Ավելացումներ	2 861	13 342	16 203
Օտարումներ, դուրս գրումներ	(1 770)	(6 603)	(8 373)
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	709 498	68 942	778 440
2024թ հունվարի 1-ի դրությամբ	709 498	68 942	778 440
Ավելացումներ	-	5 000	5 000
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	709 498	73 942	783 440
Կուտակված մաշվածություն			
2023թ հունվարի 1-ի դրությամբ	154 302	51 106	205 408
Տարվա ծախս	82 323	4 681	87 004
Նվազեցումներ	(1 770)	(6 603)	(8 373)
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	234 855	49 184	284 039
2024թ հունվարի 1-ի դրությամբ	234 855	49 184	284 039
Տարվա ծախս	82 402	9 381	91 783
Նվազեցումներ	-	-	-
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	317 257	58 565	375 822
Զուտ հաշվեկշռային արժեք			
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	474 643	19 758	494 401
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	392 241	15 377	407 618

31.12.2024թ. դրությամբ Ընկերությունը չունի ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով որևէ պայմանագրային հանձնառություն:

2024թ. ընթացքում Ընկերությունը չի հայտնաբերել ոչ նյութական ակտիվների արժեզրկման որևէ հայտանիշ:

31.12.2024թ. դրությամբ Ընկերության ոչ նյութական ակտիվների սեփականության իրավունքի սահմանափակումներ առկա չեն:

8. Վարձակալություն

2023թ հոկտեմբերի 10-ին "Հաշվարկային կենտրոն" ՓԲԸ-ն և "ԷԷՀՕ" ՓԲԸ-ն միջև ամբողջ վարձակալված տարածքի համար կնքել են մեկ միասնական պայմանագիր՝ հինգ տարի գործողության ժամկետով:

Վարձակալության հաշվեկշռային արժեքները ներկայացված են ստորև՝

Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ

Հազար դրամ	31.12.2024թ.	31.12.2023թ.
Սկզբնական արժեք	87 997	87 997
Մաշվածություն	(21 999)	(4 400)
Հաշվեկշռային արժեք	65 998	83 597
Հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ին	83 597	11 378
Ավելացում տարվա ընթացքում	-	82 740
Մաշվածության ավելացում	(17 599)	(10 521)
Հաշվեկշռային արժեքը դեկտեմբերի 31-ին	65 998	83 597

Վարձակալությանը վերաբերող շահույթում կամ վնասում ճանաչված գումարները հետևյալն են.

Հազար դրամ	2024թ	2023թ
Վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախս (ներառված է Ֆինանսական ծախսերում)	(7 438)	(2 994)
Տարվա մաշվածություն (ներառված է վաճառքի ինքնարժեքում (Ծանոթ. 19) և վարչական ծախսերում (Ծանոթ. 20))	(17 599)	(10 521)
	(25 037)	(13 515)

Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը հետևյալն են.

	2024թ	2023թ
Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը (ԱԱՀ ներառյալ)	26 618	15 730

Ստորև ներկայացված են վարձակալության գծով պարտավորություններն ըստ մարման ժամկետների.

Հազար դրամ	Վարձակալության գծով պարտավորություններ (առանց ԱԱՀ)		Վարձակալության գծով պարտավորությունների ներկա արժեք (առանց ԱԱՀ)	
	31.12.2024թ	31.12.2023թ	31.12.2024թ	31.12.2023թ
Մինչև մեկ տարի	22 181	22 181	12 562	12 562
1-ից 5 տարի	60 999	83 180	57 210	71 953
5 տարուց ավելի	-	-	-	-
	83 180	105 361	69 772	84 515
Հանած դեռ չկրած ֆինանսական ծախսեր	(13 408)	(20 846)		
	69 772	84 515		

Ներառված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝

	31.12.2024թ	31.12.2023թ
Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս	12 562	12 562
Վարձակալության գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մաս	57 210	71 953
	69 772	84 515

Վարձակալության գծով պարտավորությունների գեղջման նպատակով կիրառված վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը 10% է:

9. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Այս հոդվածում ներկայացված են Ընկերության կողմից վարձակալված շենքային տարածքի վրա կատարված կապիտալ ծախսումները, որոնք ամորտիզացվում են 20 տարի ժամկետով:

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբական արժեք	9 264	9 264
Մաշվածություն	(5 996)	(5 451)
Հաշվեկշռային արժեք	3 268	3 813

10. Առևտրական դեբիտորական պարտքեր

Այս հոդվածում ներկայացված են մատուցված ծառայությունների գծով ամկա դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկի շարունակական գնահատումը կատարվում է դեբիտորների ֆինանսական վիճակի հիման վրա, և համապատասխան դեպքերում ստեղծվում է հնարավոր պարտքային կորուստների գծով պահուստ:

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով Առևտրային դեբիտորական պարտքի արժեզրկման պահուստ	73 675	60 424
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	73 675	60 424
Տրված ընթացիկ կանխավճարներ	6	-
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր	1 174	928
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	74 855	61 352

Ընկերության դեբիտորական պարտքերի առավել նշանակալի մասը վերաբերում է «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից ստացվելիք գումարներին, որոնք սովորաբար մարվում են 1 ամսվա ընթացքում: Դեբիտորական պարտքերի ապահովման միջոց են հանդիսանում բանկում «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի անվամբ բացված հատուկ հաշվում մուտքագրվող դրամական միջոցները՝ որպես գրավի առարկա, ինչպես նաև Ընկերության ստացած բանկային երաշխիքն իր կողմից մատուցվող ծառայությունների ամբողջ ծավալով՝ ի ապահովում «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ստացված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարներին:

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 25-ում:

11. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	161 205	58 086
Կանխիկ դրամը դրամարկղում	-	39
	161 205	58 125

Դրամական միջոցները արտահայտված են ՀՀ դրամով:

Բանկային ավանդներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկային ավանդների մնացորդը «Արդշին» բանկում կազմել է 50 000 հազար դրամ: Հաշվեգրված տոկոսային եկամուտի մնացորդը կազմել է 2 211 հազար դրամ:

12. Այլ ընթացիկ ակտիվներ

	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գալիք ժամանակաշրջանին վերաբերող ծրագրային սպասարկման գծով կատարված վճարումներ	16 471	11 138
Այլ	148	750
	16 619	11 888

13. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 30,462 հատ 10,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսերից: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են ու լրիվ վճարված:

14. Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Չուտ հետաձգված հարկ	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցներ	-	-	(18 502)	(15 362)	(18 502)	(15 362)
Ոչ նյութական ակտիվներ	5 443	2 071	-	-	5 443	2 071
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	279	248	-	-	279	248
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	-	-	(11 880)	(15 048)	(11 880)	(15 048)
Վարձակալության գծով պարտավորություններ	12 559	15 213	-	-	12 559	15 213
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	1 418	1 358	-	-	1 418	1 358
Հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխվող հարկային վնաս	-	5 178	-	-	-	5 178
	19 699	24 068	(30 382)	(30 410)	(10 683)	(6 342)

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հազար դրամ	2023թ հունվարի 1-ի դրությամբ		2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Եկամտում	Նվազում	Եկամտում	Նվազում	Եկամտում	Նվազում
Հիմնական միջոցներ	(11 219)	(4 143)	(15 362)	(3 140)	(18 502)	
Ոչ նյութական ակտիվներ	(1 604)	3 675	2 071	3 372	5 443	
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	216	32	248	31	279	
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	(2 048)	(13 000)	(15 048)	3 168	(11 880)	
Վարձակալության գծով պարտավորություններ	2 267	12 946	15 213	(2 654)	12 559	
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	1 214	144	1 358	60	1 418	
Հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխվող հարկային վնաս	-	5 178	5 178	(5 178)	-	
Չուտ հետաձգված հարկ	(11 174)	4 832	(6 342)	(4 341)	(10 683)	

15. Մնորոշում

2022թ Ընկերությունը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ որպես շնորհ ստացել է 586,940 հազար դրամի արժողությամբ «Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում և Էլեկտրաէներգիայի առևտուր» շուկայի կառավարման ծրագիրը: 2023թ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ որպես շնորհ ստացել է 93 567 հազար դրամի հիմնական միջոցներ, 8 977 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ, 1 937 հազար դրամի պաշարներ և 5 700 հազար դրամի դիզայն նախագիծ:

2024թ նույն գործակալությունից որպես շնորհ ստացել է 206 հազար դրամի հիմնական միջոցներ

2023թ. շնորհից եկամուտ է ճանաչվել 89 100 հազար դրամ, իսկ 2024թ՝ 87 737 հազար դրամ:

16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9 208	9 410
Աշխատակիցներին վճարման ենթակա գումարներ	17 317	18 438
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	26 525	27 848
Վճարման ենթական հարկեր՝ բացի շահութահարկից	16 328	17 931
Այլ կրեդիտորական պարտքեր	337	251
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	43 190	46 030

17. Ընթացիկ պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեկազրի մնացորդի համեմատությամբ անհի կամ նվազման գումարով՝ ճշտելով անձնակազմի գծով ծախսումները: Անկկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Ձեռքման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընթացիկ պահուստները կազմել են համապատասխանաբար 7 880 հազար դրամ և 7 542 հազար դրամ:

18. Հասույթ

Հազար դրամ

Ծառայությունների մատուցումից հասույթ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
616 442	528 513
616 442	528 513

Հասույթն իրենից ներկայացնում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի վաճառքով զբաղվող ընկերություններին շուկայի օպերատորի ծառայությունների մատուցումը: Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները որոշվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներին շուկայի օպերատորի ծառայություններ մատուցելու համար 2023թ. փետրվարի 1-ից մինչև 2024թ. փետրվարի 1-ը ՀՀ ՀԾԿՀ կողմից սահմանվել է կայաններից գնված և արտահանված էլեկտրաէներգիայի յուրաքանչյուր մեկ կվտ ժամի դիմաց 0,0659 դրամ (առանց ԱԱՀ) միասնական սակագին, իսկ 2024թ. փետրվարի 1-ից մինչև 2025թ. փետրվարի 1-ը սահմանվել է 0,0715 դրամ (առանց ԱԱՀ) միասնական սակագին:

Կատարման ենթակա պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է գնորդների հետ պայմանագրերում նշված հատուցումների հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ գնորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն գնորդների հետ պայմանագրերի գծով կատարողական պարտականությունների բնույթի և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ: Գնորդների հետ պայմանագրերի գծով կատարողական պարտականությունները սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Ընկերությանը տրամադրված էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայի շրջանակում գործունեություն իրականացնելու պայմաններում:

Ծառայության տեսակը	Կատարման ենթակա պարտականությունների բնույթը	Հասույթի ճանաչումը ՖՀՄՍ 15-ի համաձայն
Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայություն	- Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում կնքված պայմանագրերի, ներկրում կամ արտահանում նախատեսող պայմանագրերի համաձայն գնված և վաճառված էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվառում, փաստաթղթերի կազմում և մեծածախ շուկայի առևտրի մասնակիցներին և ծառայություն մատուցվողներին ներկայացում, - Էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ավտոմատացված համակարգի շահագործում և աշխատունակ վիճակում պահպանում, - Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկում, իսկ հաղորդման ցանցում նաև փաստացի կորուստների մեծությունների հաշվարկում և հաշվառում:	Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունից օգուտները՝ վերջինիս մատուցմանը զուգընթաց, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում: Այդ իսկ պատճառով, Ընկերությունն իր պարտականությունները կատարում և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում:

19. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

Աշխատավարձ	260 086	245 794
Մաշվածություն և ամորտիզացիա	132 346	120 743
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	96 369	103 987
Նյութական ծախսեր	5 790	7 694
Գիտատեխնիկական աշխատանքների ստացում	7 000	7 000
ISO ստանդարտների ներդրում	7 630	-
Գործուղման ծախսեր	3 890	5 828
Կոմունալ և այլ ծառայություններ	6 312	12 413
	519 423	503 459

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

20. Վարչական ծախսեր

Հազար դրամ

Աշխատավարձ	108 405	99 850
Մաշվածություն և ամորտիզացիա	9 747	8 154
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սպասարկում	776	853
Գործուղման ծախսեր	334	1 047
Գրասենյակային, կոմունալ	2 116	2 075
Աուդիտորական և բանկային ծախսեր	975	998
Այլ	1 069	1 351
	123 422	114 328

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

21. Այլ ծախսեր

Հազար դրամ

Պետական տուրք	5 000	5 000
Այլ վճարներ	990	1 090
Օգնություններ	860	1 730
Այլ	1 994	69
	8 844	7 889

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

22. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր

Ֆինանսական եկամուտներ

2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկային ավանդների գծով հաշվեգրված եկամուտը «Կոմվերս» բանկում կազմել է 6 523 հազար դրամ, «Արդշին» բանկում՝ 3 613 հազար դրամ

Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ

Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	7 438	2994
	7 438	2 994

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

23. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ շահութահարկ՝ Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	7 313	-
Հետաձգված հարկեր Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	4 341	(4 832)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	11 654	(4 832)

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18% է (2023թ.՝ 18%):

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապատասխանեցում

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	%	2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	%
Շահույթ՝ նախքան հարկումը	55 417		(4 536)	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքաչափով	9 975	18	(816)	(18)
Չուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ	33 788	61	(4 016)	(89)
	43 763	79	(4 832)	(107)

24. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը (տե՛ս Ծանոթ. 1):

Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումները հետևյալն են

Հազար դրամ	2024թ	2023թ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	44 775	22 548

25. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընդհանուր ակնարկ

Ընկերությունը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Ընկերության ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Ընկերության նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարության ու ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Ընկերությունը, վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարմամբ, Ընկերության համար կառաջացնի ֆինանսական կորուստ, և հիմնականում առաջանում է Ընկերության պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերից:

Առևտրական դեբիտորական պարտքերը հիմնականում ընդգրկում են ծառայությունների մատուցման դիմաց ստացվելիք գումարները:

Ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2024թ.	31.12.2023թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր (Ծանոթ. 10)	73 675	60 424
Բանկային ավանդներ (Ծանոթ. 11)	52 211	100 793
Դրամական միջոցներ (Ծանոթ. 11)	161 205	58 125
	287 091	219 342

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հեռավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է. շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

Արժույթային ռիսկ

Ընկերությունն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժույթային ռիսկին ենթարկվածություններն Ընկերությունը չի կառավարում:

31.12.2024թ. դրությամբ Ընկերությունն արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներ և դրամային պարտավորություններ չունի (31.12.2023թ.՝ չունի):

Տոկոսադրույթային ռիսկ

Տոկոսադրույթների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխառվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Ընկերությունն ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Ընկերության համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

Ընկերությունը 31.12.2024թ. դրությամբ ունի ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ՝ բանկային ավանդների ձևով:

26. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների

փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվում են՝ դրանցից առաջացող բոլոր դրամական ներհոսքերն ու արտահոսքերը համապատասխան շուկայական տոկոսադրույքներով զեղչելու միջոցով:

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվ-ների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

27. Պայմանական դեպքեր

Դատական գործեր

31 դեկտեմբերի 2024թ. դրությամբ Ընկերության դեմ հարուցված կամ Ընկերության կողմից հարուցված դատական գործեր չեն եղել:

Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2024թ. դրությամբ Ընկերությունը տրամադրած կամ ստացված երաշխավորություններ չի ունեցել:

Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երբորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրա-կան պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտա-վորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցում-ների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

Գլխավոր տնօրենի ժ/պ

Ն. Հարությունյան



Գլխավոր հաշվապահ

Ն. Գրիգորյան

